


ՄԱՐԴՈՒ ԴՈՔԵՎՈՐ ԷՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայտնի է, որ սաղմն սկսում է ձևավորվել իգական սեռական բջիջի՝ ձվաբջջի և արական սեռական բջիջի՝ սպերմատոզոիդի միաձուլումից, այսինքն՝ բեղմնավորումից հետո: Բեղմնավորված ձվաբջիջը՝ զիգոտը, սկսում է տրոհվել՝ առաջացնելով բջիջներից կազմված մի փոքրիկ բուշտ, որից առաջանում են սաղմնային թերթիկները, իսկ դրանից էլ ձևավորվում են ապագա օրգանիզմի հյուսվածքներն ու օրգանները (Նկ. 5, 6): Այդ պրոցեսը տևում է մոտավորապես 40 շաբաթ, որից հետո ծնվում է նոր մարդը: Մայրերը հղիության ընթացքում կատարում են բժիշկների տված բոլոր խորհուրդներն առողջ նորածին լույս աշխարհ բերելու համար, որը կունենա կենսունակ օրգանիզմ, սակայն ինչպիսին կլինի նրա հոգևոր էությունը, հիմնականում կախված է ծնողների հոգևոր, հոգեկան կամ հոգեբանական վիճակներից:


Ֆրանսիացի մանկավարժ Օ. Այվանխովն իր «Դաստիարակություն, որն սկսվում է մինչև ծնվելը» գրքում գրում է. «Բոլոր մանկավարժները զբաղվում են երեխաներով, իսկ ես՝ ոչ: ...Ես գտնում եմ, որ դաստիարակությունը պետք է սկսել ոչ թե երեխաներից, այլ ծնողներից: Ես մանկավարժության ոչ մի տեսության չեմ հավատում և համոզված եմ, որ այս խնդրում ամենակարևորը ծնողների ապրելակերպն է երեխայի ծնվելուց առաջ և հետո: Եթե ծնողները ոչինչ չեն անում իրենց սեփական դաստիարակության համար, ինչպե՞ս կարող են երեխա դաստիարակել: Ապագա ծնողները նույնիսկ չեն մտածում, որ բեղմնավորմանը պետք է պատրաստվել ամիսներով և նույնիսկ տարիներով, որովհետև դա սրբազան գործ է»¹:



Նկ. 5. Բեղմնավորում և ձվաբջջի տրոհում:

Հեղինակը պնդում է, որ մարդու կենսակերպը գրվում, գրանցվում է նրա քրոմոսոմներում և պահպանվում է որպես բջիջների հիշողություն: «Որքան էլ վարպետորեն մենք խաղանք հաճելի, ազնիվ կամ գթասիրտ մարդու դեր, անօգուտ է, որովհետև այն, ինչ մենք իրականում մտածում ենք, զգում ենք, ապրում ենք մեր հոգու խորքում, գրանցվում և ժառանգաբար փոխանցվում է սերնդեսերունդ», - գրում է Օ. Այվանխովը:

¹ Айванхов О. *Воспитание начинающееся до рождения*. Москва, 1997, стр. 10.



Նկ. 6. Ձարգացող սաղմի անրացումը արգանդի պատին:



Գուրիչ Ա. Գ.
(1874-1954)

Դեռևս 1923 թվականին ռուս գիտնական Ա.Գ. Գուրիչը, գրանցելով մարդու բջիջների ճառագայթումը, առաջին անգամ ձևակերպեց կենսաբանական դաշտի՝ կենսադաշտի կոնցեպցիան: Պարզվեց, որ այդ դաշտը ինֆորմացիա է կրում տվյալ օրգանիզմի մասին: Ա. Գուրիչն այն անվանեց «միտոզենտիկական» դաշտ, քանի որ այն ժառանգական բնույթ է կրում, այսինքն՝ կարող է փոխանցվել սերունդներին²: Արդեն պարզվել է, որ ինֆորմացիա կրող տորսիոն դաշտերի հատկությունները համընկնում են Ա. Գուրիչի հայտնագործած բջջային դաշտերի հատկությունների հետ:

Ակադեմիկոս Վ.Պ.Կազնաչենը հանգել է այն եզրակացության, որ «յուրաքանչյուր բջիջում միաժամանակ գտնվում են և՛ սպիտակուց-նուկլեինային և դաշտային (ինֆորմացիոն) նյութեր»³, իսկ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ա. Ա. Սիլինը համոզված է, որ «...Չոլոզրաֆիկ սկզբունքի համաձայն՝ ոչ միայն սեռական բջիջները՝ գամետները, այլև օրգանիզմի յուրաքանչյուր բջիջ իր մեջ կրում է այդ օրգանիզմի ամբողջ պատկերը»⁴: Այսպիսով, օրգանիզմի բջիջները, այդ թվում նաև սեռական բջիջները՝ ձվաբջիջներն ու սպերմատոզոիդները, ոչ միայն գեների, այլև իրենց շուրջը գտնվող կենսադաշտերի մակարդակով ինֆորմացիա են պարունակում տվյալ օրգանիզմի մասին:

«Չդիության ինն ամիսների ընթացքում մոր օրգանիզմը ոչ միայն աշխատում է երեխայի ֆիզիկական մարմնի ձևավորման, այլև, ինքն էլ չհիմնադրված, աշխատում է սաղմի վրա՝ ստեղծելով բարենպաստ կամ անբարենպաստ պայմաններ նրանում եղած տարբեր հատկանիշների զարգացման համար: Ինչպե՞ս: Իր մտքերին, զգացմունքներին և ապրելակերպին համապատասխան»: Այս պրոցեսը Օ. Այվանիսովը անվանում է հոգևոր գալվանապլաստիկա:


Ի՞նչ է իրենից ներկայացնում գալվանացման պրոցեսն ընդհանրապես:

² **Гавриш О. Г.** *О физической природе биологического поля. // Сознание и физическая реальность, т. 4, № 2, 1999, стр. 51.*

³ **Казначеев В. П.** *Проблемы живого космического пространства. // Интеллект планеты как космический феномен. Новосибирск, 1997, стр. 13.*

⁴ **Силин А. А.** *Тайна информации. // Сознание и физическая реальность, т. 4, № 1, 1999, стр. 16.*

Երկու էլեկտրոդներ տեղավորվում են որևէ մետաղի՝ ոսկու, արծաթի, պղնձի կամ անագի աղային լուծույթում: Դրական բևեռը՝ անոդը, տվյալ մետաղից պատրաստված թիթեղ է, իսկ բացասական բևեռը՝ կատոդը, որևէ առարկայի մոդել: Լուծույթի միջով էլեկտրական հոսանք է բաց թողնվում, որի արդյունքում աղի լուծույթում եղած մետաղի իոնները նստում են կատոդի վրա, իսկ անոդը քայքայվելով վերականգնում է լուծույթում եղած մետաղի իոնները: Աստիճանաբար ամբողջ մոդելը պատվում է լուծույթում եղած մետաղի շերտով: Ստացվում է առարկա, որը պատված է ոսկով, արծաթով, պղնձով կամ անագով (Նկ. 7):



Նկ. 7. Գալվանացման սխեման:

Ըստ Օ. Այվանիսովի՝ նման պրոցես տեղի է ունենում նաև հղի կնոջ օրգանիզմում հոգևոր գալվանապլաստիկայի ժամանակ: Որպես կատոդ հանդես է գալիս կնոջ օրգանիզմում գտնվող արդեն բեղմնավորված ձվաբջիջը՝ զիգոտը, որը տրոհվելով ձևավորում է սաղմը: Սաղմի և մոր ուղեղի միջև, որը հանդես է գալիս որպես անոդ, առաջանում է որոշակի դինամիկական կապ: Կնոջ ուղեղում առաջացող խոհերը, ապրումներն արյան միջոցով, որը լուծույթի դերն է կատարում, փոխանցվում են սաղմին: Սաղմը կարող է հրաշալի ժառանգական նախադրյալներ ունենալ, բայց եթե մոր գլխում, պատկերավոր ասած «արճիճե» մտքեր են, ապա զարմանալի չի լինի, որ ծնվի արճապատ երեխա, այսինքն՝ հոռետես, արատավոր, հիվանդոտ: Իսկ եթե կնոջ ուղեղը «միացած է» տիեզերական հսկա մարտկոցին, որն էլ նրա գլխում տեղադրում է «ոսկյա թիթեղ», այսինքն՝ վեհ մտքեր, բարի զգացումներ, լավատեսություն ու հիացումներ գեղեցիկի նկատմամբ, ապա նրա արգանդում զարգացող երեխան կպատվի «ոսկու» շերտով: Արդյունքում կծնվի ամրակազմ, գեղեցիկ, ազնիվ, դժվարությունները, հիվանդությունները, վնասակար ազդեցությունները հաղթահարելու ընդունակ մարդ:

Մայրերի մեծ մասը պատկերացում չունի, թե իրենց հոգեկան վիճակն ինչպես է ազդում իրենց ապագա երեխայի հոգևոր էության ձևավորման վրա: Սովորաբար երեխայի մասին սկսում են հոգ տանել ծնվելուց հետո: Սակայն Օ. Այվանիսովը պնդում է, որ «ոչ մի ուսուցիչ կամ դաստիարակ չի կարող վերափոխել երեխային, եթե նա իր մոր արգանդում ստացել է ցածրորակ «տարրեր»: Ուսուցիչը կամ վարպետը երեխային կարող են միայն սովորեցնել, բայց նրան հիմնովին փոխել չեն կարող»:

Հեղինակն առաջարկում է հղի կանանց համար ստեղծել հատուկ հաստատություններ, որոնց պայմանները նրանց հնարավորություն կտան հղիության ընթացքում ունենալ միայն պայծառ մտքեր ու բարձր տրամադրություն, որոնց շնորհիվ նորածինները լույս աշխարհ կգան որպես

տաղանդավոր նկարիչներ, փայլուն գիտնականներ, լուսավոր ու օրինապաշտ մարդիկ: Դրա համար ներդրված միջոցները լիովին արդարացված կլինեն, քանի որ այլևս հարկ չի լինի կառուցել բանտեր և հիվանդանոցներ, հավաստիացնում է Օ. Այվանխովը:

Այս տեսության մասին մեր տատերը չգիտեին, սակայն առողջ սերունդ ունենալու համար առողջ ու լիարժեք սնունդ ընդունելուց բացի հղի կանանց հորդորում էին մտածել լավ ու գեղեցիկ բաների մասին, հաճախակի լինել բնության գրկում և նայել գեղեցիկ առարկաների, մտովի պատկերացնել իրենց ապագա երեխային: Այսինքն՝ ժողովրդական իմաստությունը դեռ շատ վաղուց գիտեր հոգևոր գալվանապլաստիկայի մասին:

Նշվածից պարզ է դառնում, որ մարդու հոգևոր ոլորտի ձևավորման հարցում կարևորվում է ծնողների, և հատկապես մայրերի դերը: Եթե կանայք հասկանան ի վերուստ իրենց տրված վեհ ու պատասխանատու առաքելությունը, ապա կարող են փոխել վերածնել աշխարհը: Կրթելով ու դաստիարակելով ապագա մայրերի գրագետ սերունդ, որը կգիտակցի ազգի առողջ ապագայի համար իր վրա դրված մեծ պատասխանատվությունը, կարելի է հուսալ, որ ոչ շատ հեռու ապագայում կունենանք ֆիզիկապես առողջ ու հարուստ հոգևոր ներուժով սերունդ:

Կնոջ կարևոր դերի այս գիտակցումով է Րաֆֆին գրում. *«Տվեք մեզ լավ մայրեր, և մենք ձեզ կտանք լավ որդիներ»:* Մայրերի դերը խիստ կարևորելով Գարեգին Նժդեհը գրում է. *«Մայրերի ասի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը»...* *«Հայ կինը: Սրա միջոցով հոգեփոխենք հայ ընտանիքը: Այդ վերջինի միջոցով՝ հայությունը»...* *«Մի ժողովրդի բարքերը՝ գովելի թե պարսավելի, կախում ունեն մայրերից: Իդեալ մայրեր ունենանք՝ երջանիկ Հայրենիք ունենալու համար»⁵:*



Բովանդակություն

⁵ Ոսկանյան Ա., *Հոգևոր Նժդեհը*, Երևան, «Լուսարաց», 2008, էջ 78-79: